



ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Է ՏՐԱՎՄԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱՇՎԻ ԱՌՆԵՆՔ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Հեղինակ՝ Լենա Շվաար

© ⓘ Ⓢ Ⓞ Շվաար, Լ. (2025). *Ինչու պետք է տրավմավորումը հասկանալու համար հաշվի առնենք գործականությունը . քննադատական հոգեբա-նական մոտեցում* (թրգմ.՝ Մանուսյան, Ս.). Երևան, Սոցիոսկոպ. <https://socioscope.am/archives/4626>

Անգլերենից հայերեն թարգմանությունը ներկայացնում է
Սոցիոսկոպը

Թարգմանությունը՝ Սոնա Մանուսյանի
Խմբագրումը՝ Արփի Մանուսյանի
Սրբագրումը՝ Ազնիվ Նասլյանի

Երևան 2025

Տեքստը թարգմանվել է «Indie Peace» կազմակերպության «Հավաքական տրավմա» նախաձեռնության շրջանակում՝ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ:

Թարգմանչի նախաբան

Լենա Շվաաբի¹ այս հոդվածի առանցքում քննադատական հոգեբանության համար հիմնաքարային այն դրույթն է, որ ցանկացած հոգեբանական խնդիր, տառապանք պետք է դիտարկվի ոչ թե զուտ անհատական մակարդակում՝ իբրև սոցիալական համատեքստից անջատ, անձնական փորձառություն, այլ սոցիալական միջավայրի, ինստիտուտների, հարաբերությունների հետ սերտ կապի մեջ: Ընդ որում՝ սոցիալականի դերը էական է և՛ հոգեբանական խնդրի առաջացման, և՛ (չ)հաղթահարման մեջ:

Լ. Շվաաբը սկսնակ մասնագետ է, և այս հոդվածը նրա առաջին հրապարակումներից է, սակայն այն հազվագյուտ տեքստերից, որ տրավմավորումը քննում են մարդու գործականության, սուբյեկտայնության և դրանց իրացումը սահմանափակող սոցիալական հանգամանքների հետ առնչության մեջ՝ կլինիկական ըմբռնումից անդին (թեև ինքը՝ Շվաաբը հենց կլինիկական հոգեբան է): Թեև հոդվածում քննարկվում է ոչ թե հավաքական, այլ հիմնականում անհատական տրավմավորումը, քննարկման դիտանկյունը տեսադաշտ է բացում նաև հավաքական տրավմայի հարցերը գործականության և սուբյեկտայնության հետ կապի մեջ հասկանալու համար:

¹ Լենա Շվաաբը կլինիկական հոգեբան է: Ներկայում որպես հոգեթերապևտ աշխատում է Գերմանիայի Նաումբուրգ քաղաքի հոգեբուժական կլինիկայում: Հետաքրքրված է քննադատական հոգեբանական մոտեցումներով և նրանով, թե ինչպես այն կարող է ներառվել հոգեթերապևտիկ աշխատանքում՝ այցելուների գործականությունը մեծացնելու համար:

Ինչու պետք է տրավմավորումը հասկանալու համար հաշվի առնենք գործականությունը². քննադատական հոգեբանական մոտեցում³

Մեղմագիր

Տրավմավորումը սոսկ սուր սպառնալիքի, վերահսկողության կորստի կամ անգորացման անձնական և առանձին փորձառություն չէ: Քննադատական հոգեբանական տեսակյունից (հետևելով Կլաուս Հոլցկամպին⁴) տրավմավորումը քաղաքական է մի քանի առումներով. այն խարսխված է սոցիալական համատեքստում, այդ իսկ պատճառով տրավմայից տուժածների անձնային գործոնները հաշվի առնելու հետ մեկտեղ պետք է վերլուծել նաև սոցիալական, տնտեսական և քաղաքական այն պայմանները, որոնք նախ և առաջ թույլ են տալիս և վերարտադրում են այդ տրավմային հանգեցնող բնությունը: Կարևոր է տրավմատիկ փորձառություն ունեցածների ներգրավվածությունն ու դժվարությունները հասկանալ նրանց փոխվելու հեռանկարի տեսանկյունից: Գործականությունը՝ որպես քննադատական հոգեբանության հիմնարար հասկացություն, ըմբռնվում է իբրև սուբյեկտի՝ իր կենսապայմանները

² Խոսքը *agency* հասկացության մասին է, որը հոգեբանական, սոցիոլոգիական գրականության մեջ լայն սահմանմամբ անձի կամ խմբի՝ կյանքի հանգամանքների, իրադարձությունների վրա ազդեցություն ունենալու և այդ ուղղությամբ գործելու կարողության զգացումն է:

«Գործականություն» համարժեքը առաջին անգամ շրջանառել ենք թարգմանական ժողովածուում: Կիրառման առաջարկը և հիմնավորումը տե՛ս *Անհատը և հանրայինը. տեքստեր փոխհարաբերության մասին* (2024), էջ 9-18:

³ Թարգմանված է աննշան կրճատումներով, որոնք տեքստում նշված են փակագծերի մեջ առնված բազմակետերով: Բնագիրը՝ Schwaab, L. (2024). Why we need to consider agency to understand traumatization: A critical psychological approach. *Annual Review of Critical Psychology*, 18, 508-520.

⁴ Մեծատառերը՝ ըստ բնագրի: Հեղինակը քննադատական հոգեբանությունը երբեմն գրում է մեծատառերով, երբ հղում է անում քննադատական հոգեբանության հատկապես գերմանական դպրոցին և դրա ներքո Հոլցկամպի զարգացրած ուղղությանը:

տնօրինելու սոցիալապես միջնորդված հնարավորություն, տարածք է բացում տրավմավորման այս քաղաքական չափողականության համար և հնարավորություն է ընձեռում նոր դիտանկյունից նայելու տրավմավորման տեսակները պարզապես ըստ «հրահրող իրավիճակի», այն է՝ բնական աղետների (օրինակ՝ երկրաշարժեր, հեղեղներ) և մարդածին աղետների (օրինակ՝ խոշտանգում, բռնաբարություն) տարբերակելուն: Վերջիններս հետտրավմատիկ սթրեսային խանգարում ձևավորելու ավելի բարձր ռիսկ են առաջացնում՝ առանց համոզիչ բացատրություն տալու, թե հատկապես ինչու: Քննադատական հոգեբանական մոտեցումը, ի հավելումն, առաջարկում է ոչ միայն դիտարկել նախասկզբնական իրավիճակը, այլև հասկանալ տրավմատիկ գործընթացը որպես հասարակական արտադրությանը մասնակցությունից մեկուսացում, ինչպես նաև որպես սեփական կենսապայմանները լայնորեն տնօրինելու հնարավորության (այսպես կոչված՝ ընդհանրացված գործականության) մերժում: Քննադատական Հոգեբանության հոլցկամայյան մոտեցման առանցքային հասկացություններին և դրա վրա հիմնված՝ հոգեկան խանգարումների ըմբռնումներին հակիրճ անդրադարձնալուց հետո ես ցանկանում եմ ցույց տալ, թե ինչքանով է տրավմավորումը անհրաժեշտ հասկանալ որպես քաղաքական պարագա: Այնուհետև ցանկանում եմ քննարկել տրավմավորման վերաբերյալ նախորդող քննադատական-հոգեբանական անդրադարձները, ինչպես նաև ցույց տալ, թե ինչպես է «գործականություն» հասկացությունը թույլ տալիս ընդլայնել տրավմավորման ըմբռնումը՝ ներկայացնելով սա մարդածին և բնական աղետների օրինակներով, ինչպես նաև ցույց տալ, թե ինչու է ընդհանրացված գործականությունն այս

համատեքստում առանձնապես կարևոր:

Հիմնաբառեր

Քննադատական հոգեբանություն, տրավմավորում, գործականություն,
մարդածին և բնական աղետներ, հոգեթերապիա

«Դու ընկել ես, սակայն չես ընկնում: Աչքերը պահում են քեզ»:

Հիլդե Դոմին

Ներածություն

Հոգեբանություն սովորելու տարիներին ինձ շարունակ վրդովում էր այն, թե ինչպես են միագործոն բանի հանգեցնում այն համատեքստը, որում անհատներն ապրում են: Տրավմավորման իմ ըմբռնումը սկզբում ձևավորվել է բակալավրի ուսումնառությանս ընթացքում կլինիկական հոգեբանության մի դասախոսությամբ, որում տրավման նկարագրվում էր որպես առանձնապես ուժգին սթրեսոր, որը գերազանցում է անձի՝ տեղի ունեցածը վերամշակելու, իմաստավորելու կարողությունները, և որն ուստի պետք է հասկանալ ազդակ-հակազդում սխեմայի ներքո: Սրանից որոշ ժամանակ անց՝ հոգեբուժական-հոգեմարմնական մի կլինիկայում փորձնակ լինելուս ընթացքում, սեփական փորձով հասկացա, թե որքան թերատ է այս ազդակ-հակազդում դիտանկյունը: Մի բուժառու, որը խորհրդային աշխատանքային ճամբարում էր եղել, կլինիկայում գործող՝ իշխանության և կախյալության գերակայող հարաբերությունների բերումով շարունակաբար անուժության և անգորացման զգացումներ էր վերապրում: Դրանից հետո իմ մեջ հարց ծագեց՝ ինչպիսի՞ն կարող է լինել իրական աջակցությունը՝ զորեղացման գործընթացների իմաստով: Քննադատական Հոգեբանությունը՝ հասարակության և անհատի սերտ փոխկապվածությունն ընդգծող իր տարբերակով, կարող է օգտակար լինել՝ հասկանալու համար տրավմայի բազմաչափ աղբյուրները և ազդեցությունները: Իմ շարադրանքում նախ կանդրադառնամ նրան, թե ինչպես կարելի է ըմբռնել տրավմավորումը, և ինչու այն պետք է ըմբռնել քաղաքական տեսանկյունից: Այնուհետև կուրվագծեմ Քննադատական Հոգեբանության հիմնական

հասկացությունները ըստ Կլաուս Հոլցկամպի, և դրա ներքո կցանկանամ հատկապես քննարկման բերել գործականության գաղափարը, որն օգնում է ավելի լավ հասկանալու հոգեախտաբանական նշանները, ինչպես նաև նոր հեռանկարներ է բացում տրավմավորման ըմբռնման գործում: Սա կբացատրվի գործնական օրինակների միջոցով, որոնք կարող ենք տարբերակել ըստ *մարդածին* և *բնական աղետների*: Բնական աղետները ներառում են բնական պատճառով առաջացած աղետներ, ինչպիսիք են, օրինակ, մակընթացային հեղեղումները, ցունամիները, փոթորիկները, մինչդեռ մարդածին աղետները հղում են միջանձնային բռնության, ինչպես, օրինակ՝ պատերազմների, բռնաբարության, խոշտանգման դեպքերում: Վերջիններիս հաճախ վերագրվում է հետտրավմատիկ սթրեսային խանգարում առաջացնելու ավելի բարձր ախտածին պոտենցիալ (Kessler և այլք, 1995)՝ առանց այդ տարբերությունը հոգեբանորեն լուսաբանելու: «Գործականություն» և հատկապես «ընդհանրացված գործականություն» եզրը կարող է նպաստել «տրավմավորում» հասկացության ավելի լավ ըմբռնմանը: Հարկ է նշել, որ անհատական տրավմատիկ գործընթացները հասկանալու համար անհրաժեշտ է տուժած անձանց հետ անմիջական աշխատանք անել: Ուստի իմ նկատառումները վերաբերում են ոչ այնքան առանձին, անհատական դեպքերի, որքան առաջարկներ են, թե որքանով կարելի է ընդլայնել տրավմայի համատեքստային ըմբռնումը՝ դրանում տեղ տալով նաև «ընդհանրացված գործականություն» հասկացությանը, որպեսզի ազդակիր անձանց տառապանքն ավելի լավ ըմբռնվի, և հնարավոր լինի դուրս բերել այս ամենից բխող անհրաժեշտ աջակցությունը:

Ինչ է տրավմավորումը, և ինչու է այն քաղաքական

Տրավմավորումը հաճախ ըմբռնվում է հետտրավմատիկ սթրեսային խանգարման (ՀՏՄԽ, անգլ.՝ PTSD, *ծնթ.՝ թրգվ.*) կլինիկական ախտորոշման համատեքստում: Տրավման, ըստ ՀՄԴ-10-ում (Հիվանդությունների միջազգային դասակարգման վերջին թարմացումը՝ ICD-10 – *ծնթ.՝ թրգվ.*) տեղ գտած սահմանման, «արտակարգ սպառնալից կամ աղետալի բնույթ ունեցող սթրեսային իրադարձություն կամ իրավիճակ է (կարճատև կամ երկարատև), որը մեծ հավանականությամբ գրեթե յուրաքանչյուր մարդու կպատճառի համակող հոգեկան տառապանք՝ դիսթրես» (World Health Organization, 2016): Հետտրավմատիկ սթրեսային խանգարման զարգացումը հնարավոր հակազդում է, որը կարող է հաջորդել տրավմային, և որը բնորոշվում է վերապրելու առանցքային ախտանշանաբանությամբ՝ կաշուն, տանջալի մտքերի և վերհուշների ձևով (կաշունություններ), գերգրգռվածությամբ, հուզական թմրածությամբ և տրավմայի հետ զուգորդվող խթանների հանդեպ խուսափողական վարքաձևերով (Flatten և այլք, 2011): Այնուհանդերձ, ախտորոշումները կարող են չարտացոլել անձի դժվարությունները՝ նրանց ընկալումների և կյանքի տնօրինման հարցերի առումով (Pedersen, 2019): Թեև ախտորոշումը կարող է նաև թեթևացում բերել՝ դասակարգելով տառապանքի բնույթը, մյուս կողմից՝ տուժած անհատները ախտաբանականացվում են և սահմանվում իբրև «հիվանդ մարդիկ»: Այս կետում հարկ է հղում կատարել հոգեկան խանգարումների դասակարգման այլ քննադատությունների ևս (տե՛ս, օրինակ, Davies, 2021).

Ախտորոշումները զուտ օբյեկտիվ կատեգորիաներ չեն, քանի որ դրանք ևս ձևավորվում են ներկայի քաղաքական և սոցիալական գործոններով: Այն, թե ինչքանով են տրավմավորման մասին պատկերացումը և տրավմայի վերաբերյալ հետազոտությունները էապես ձևավորվել և ազդվել վերոհիշյալ գործոններով, նկարագրել է Ջուդիթ Հերմանը (Herman 2003) տրավմայի ուսումնասիրությունների իր պատմական վերլուծության մեջ: Հենց ինքնակազմակերպված վետերանների խմբերի քաղաքական պահանջների շնորհիվ է, որ Վիետնամական պատերազմից հետո՝ 1980 թվականին, ՀՏԽ-ի ախտորոշումն առաջին անգամ ներառվեց *Ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկում* (DSM - *Diagnostic and Statistical Manual* – ծնթ.՝ *թրգմ.*) և այդպիսով գիտականորեն ճանաչվեց: Կանանց շարժումն ի վերջո նպաստեց ընտանեկան և սեռական բռնության ճանաչմանը և ցանկացած բռնաբարություն իբրև բռնության գործողություն ըմբռնելուն:

Տրավման հաճախ դիտվում է կենսաբժշկական դիտանկյունից (Becker, 2014; Brensell, 2014), որը տրավմատիկ իրավիճակը պատկերում է իբրև արտակարգ ուժեղ սթրեսոր, որը հանգեցնում է հիշողության բովանդակությունը կոնսոլիդացնելու անկարողությանը: Թերապիան, ըստ այդմ, կենտրոնանում է անհատի հաղթահարման (coping) ռազմավարություններն ուժեղացնելու և տրավման անձի հիշողության մեջ վերաինտեգրելու վրա՝ տեղի ունեցածի վերհուշը արթնացնելու միջոցով (Brensell, 2014; Flatten և այլք, 2011): Նյարդակենսաբանական կողմնորոշման թերապիայի վրա այս կենտրոնացումը համահունչ է նեոլիբերալ մոտեցմանը՝ ուղղված ախտանիշի կարճաժամկետ

թուլացմանը: Այս պատկերին է համահունչ նաև դեղաբանական և նյարդակոգնիտիվ հետազոտությունների աճը, որոնցում որոշ դեղամիջոցներ, ինչպես, օրինակ՝ պրոպրանոլոլն ու հիդրոկորտիզոնը, ինչպես նաև տրավմայից հետո տրվող ճանաչողական առաջադրանքները ենթադրաբար ազդում են հիշողության կոնսոլիդացման վրա՝ դրանով բերելով ախտանիշների թեթևացման (Astill Wright և այլք, 2021; Steckler և Risbrough, 2012): Այս պարագայում բնորոշ փոխատեղմամբ տուժած անձի արձագանքը վերապատկերվում է իբրև խանգարված և փոփոխելի՝ փոխարենը առհասարակ չշոշափելով այն արտաքին պայմանները, որոնք ի սկզբանե հանգեցրել են տրավմատիկ իրավիճակին: Այսպիսով՝ տրավմավորման իրական պատճառներն ու սոցիալ-քաղաքական չափումը անտեսվում են (Mlodoach, 2017): Այս ենթադրաբար ապաքաղաքական դիրքորոշումը, ըստ Դեյվիդ Բեքերի (David Becker, 2014), ծայրաստիճան ռեակցիոն է, և տրավմայի հետ աշխատանքում բացառապես ախտանիշների դեմ պայքարելը, այսպիսով, լիովին կորցնում է իր գոյության հիմնավորումը:

Տրավմավորման ըմբռնմանը սոցիալական համատեքստ ավելացնելու գաղափարը նոր չէ և հիմնականում իրականացվել է Հանս Կիլսոնի (Hans Keilson, 1979) զարգացրած՝ *հաջորդական կամ շղթայական տրավմավորման (sequential traumatization – ծնթ.՝ թրգմ.)* հղացքի ներքո: Տրավմայի այս ըմբռնումն ընդգծում է, որ «տրավմավորումները իրադարձություններին տրված պարզ հաջորդական հակազդումներ չեն, որոնք գերբեռնում են հոգեկանը, այլ դրանք պետք է իրենց դրսևորման

ամբողջ ընթացքում դիտվեն շրջապատող միջավայրի հետ առնչության մեջ» (Becker, 2014, էջ 18): Պատերազմի հրեա որբերի հետ Նիդերլանդներում անցկացված իր երկարաժամկետ հետազոտության մեջ Կիլտոնը մանրամասնորեն մշակում է տրավմավորման տարբեր հաջորդականություններ՝ կենտրոնանալով տրավմավորող իրադարձությանը և՛ նախորդող, և՛ հաջորդող ժամանակամիջոցների վրա: Այստեղ հատկապես կարևոր է այն, որ վերջին՝ պատերազմի ավարտին հաջորդած փուլը «շատ հարցվողներ նկարագրում էին իբրև ամենակայունը և ցավոտը իրենց կյանքում» (Keilson, 1979, էջ 58): Այս ժամանակահատվածում, երբ պիտի որ տեղի ունենար տրավմատիկ փորձառությունը վերամշակելու, մարսելու բուն գործընթացը, վերականգնման և վերաթնորման փորձերը հաճախ բերում էին ապրած տրավմայի ամրապնդմանը: Իր աշխատանքում նա տրավման ըմբռնում է իբրև սոցիալապես միջնորդված գործընթաց և այդպիսով կենտրոնանում է ոչ միայն այն հարցի վրա, թե ինչպես է հասարակությունը գործ ունենում զոհերի հետ, այլև միաժամանակ քննում է այն կենսապայմանները, որոնք նախորդել են փաստացի հոգեվնասող իրավիճակի առաջ գալուն: Դ. Բեքերն այս ըմբռնումը ընդլայնել է՝ դրանում ներառելով սոցիալաբանական տրավմայի գործընթացները և ընդգծելով վնասվածքի հոգեւոցիալական բնույթը (Becker, 2014, էջ 18): Սրան հաջորդում է տրավմայի համատեքստային ըմբռնումը, որը ներառում է «սոցիալական պայմանների, կյանքի համատեքստերի, [...] իշխանության և կախյալության հարաբերությունների, տրավմայի զոհերի վերաբերյալ առասպելների և

նախապաշարմունքների իմացություն» (Brensell, 2014, էջ 124)՝ բարդ հոգեբանական հակազդումները հասկանալի դարձնելու համար: Հետևաբար տրավմայի դասական հոգեբուժական ըմբռնմամբ չի հաջողվում որսալ տրավմավորման սոցիալապես միջնորդված գործընթացի բազմաբարդությունը: Իր «Ի՞նչ է տրավմավորումը. քննադատական հոգեբանական գրախոսություն և վերաձևակերպում» հոդվածում Փեդերսենը (Pedersen, 2019) ձևակերպում է սուբյեկտագիտության⁵ մոտեցումը տրավմային՝ վերջինս հասկանալով իբրև վերահսկողության կորստի անձնական, ընկճող զգացում ապրելու գործընթաց, որը տեղի է ունենում ամենօրյա կենսագործունեության կոնկրետ ժամանակում և տեղում: Սա պնդելիս նա հղում է Հոլցկամպի քննադատական հոգեբանությանը, որն ավելի մանրամասնորեն կքննարկվի ստորև:

Կլաուս Հոլցկամպի քննադատական հոգեբանության որոշ առանցքային հասկացությունների ներածություն

Հիմնվելով 1968 թվականի ուսանողական շարժման շրջանակում առաջ եկած գիտության քննադատության վրա և հատկապես ազդվելով Կլաուս Հոլցկամպի գործերով (հատկապես նրա՝ 1983 թվականի «Հոգեբանության հիմքերը դնելով» աշխատությամբ⁶)՝ Քննադատական Հոգեբանությունը

⁵ Subject science, գերմաներեն՝ Subjektwissenschaft: Այս հոդվածի համար առանցքային՝ քննադատական հոգեբանության հասկացություններից է, որով ընդգծվում է ուսումնասիրության մեջ հետազոտվողին որպես սուբյեկտ դիտելու, նրա դիտանկյունից նայելու կարևորությունը:

⁶ Խոսքը Կլաուս Հոլցկամպի *Grundlegung der psychologie* գրքի մասին է, որը կա նաև այս հոդվածի գրականության ցանկում:

մերժում է սուբյեկտիվ փորձառություններն օբյեկտիվորեն գրանցելու՝ դասական փորձարարական հոգեբանության փորձերը (Holzkamp, 1988): Սրան հակառակ՝ Հոլցկամպը կոչ է անում հետազոտության, որը կլինի սուբյեկտների *հետ* և ոչ թե սուբյեկտների մասին՝ այսպես ասած սուբյեկտագիտության (*Subjektwissenschaft*) շրջանակում, որը ենթադրում է սուբյեկտի դիրքից նայելը: Սա ուղղված է «ընդդեմ հոգեբանության՝ որպես տիրապետման և հարմարման գիտության և ընդդեմ հասարակական հակասությունների հոգեբանականացման⁷» (Holzkamp, 1983, էջ 25) և այսպիսով ձևակերպում է հոգեբանության և հասարակության համատեղ քննադատության ներդաշնակեցված մոտեցում: Այստեղ քննադատվում է մարդու «բնության» և «սոցիալականության» փոխբացառում-հակադրումը» (Holzkamp, 1988, էջ 304), քանի որ դրանով անտեսվում է այն ակտիվ, ձևավորող ներգործությունը, որ սուբյեկտն ունի իր կենսապայմանների վրա: Սուբյեկտը սոցիալական, օբյեկտիվ պայմանների հետ կրկնակի հարաբերությունների մեջ է, որովհետև, մի կողմից, նա ապրում է դրանց ներքո, բայց նաև ստեղծում ու ձևավորում է դրանք (Holzkamp, 1983, էջ 354) և այդպիսով ներգրավված է պայմանների վերարտադրության մեջ: Այս պայմանները, սակայն, չեն վճռում մարդու գործողությունը և ոչ էլ, մյուս կողմից, հիմնված են սուբյեկտիվորեն ստեղծված իմաստի վրա: Փոխարենը՝ սուբյեկտիվ գործողությունները «խարսխված են» կենսապայմաններում (Holzkamp, 1983, էջ 348): (...)

⁷ «Psychologization»՝ «հոգեբանականացում» հասկացությունն օգտագործվում է քննադատաբար՝ ցույց տալու համար, որ ոչ զուտ հոգեբանական, այլ համակարգային պատճառներով առաջացած խնդիրները հանիրավի պարզեցվում և վերագրվում են անհատական մակարդակի հոգեբանական խնդիրներին (*ծնթ. թրգմ.*):

Գործողության բոլոր սուբյեկտիվ հիմնավորումները հիմնված են անհատական կարիքի իրավիճակի վրա և այդպիսով կարող են «հակասել իմ օբյեկտիվ կյանքի շահերին, սակայն ո՛չ իմ մարդկային պահանջմունքներին և կյանքի շահերին այնպես, ինչպես ես եմ դրանք փորձընկալում իբրև իմ իրադրություն» (Holzkamp, 1983, էջ 350): Այս ենթադրությունից Հոլցկամպը եզրակացնում է, որ մարդկային էակները չեն կարող գիտակցաբար իրենք իրենց վնասել (մի բան, որն *սպրիտրի դրույթ է անհատական գիտության մեջ*): Յուրաքանչյուր գործողություն սուբյեկտիվորեն ֆունկցիոնալ է պահանջմունքների բավարարման առումով: Ավելին՝ գործողությունները պետք է նաև «միջանձնայնորեն ընկալելի» լինեն, ասել է թե՛ եթե գործողությունները խարսխված են սուբյեկտի պահանջմունքների և կենսական շահերի մեջ, ապա այս պատճառները պետք է նաև ուրիշների համար հասկանալի լինեն: Նույնիսկ հոգեկան խանգարումների համատեքստում դրսևորվող վարքաձևերի դեպքում դրանց հիմնավորումները սկզբունքորեն վերակառուցելի են:

Գործականության դերը

Սեփական կենսապայմանների հետ հարաբերվելու սուբյեկտի հնարավորությունները հատկապես արտահայտվում են նրանց գործականության մեջ (*Handlungsfähigkeit*): Գործականությունը քննադատական-հոգեբանական ըմբռնմամբ «սեփական կենսապայմանների տնօրինումն է, որը միջնորդավորված է հասարակությամբ՝ իբրև ամբողջով» (Holzkamp, 1983, էջ 239), և որը ծագում

է հասարակության՝ իբրև ամբողջի ձևավորմանը սուբյեկտի մասնակցությունից: Գործականությունը կարելի է դիտարկել երկու կերպ. սուբյեկտը կարող է «ձգտել ընդլայնելու գործելու պայմանները տնօրինելու իր կարողությունը» (Meretz, 2017, էջ 94) կամ էլ «որպես գործողության շրջանակ ընդունելու առկա պայմանները» (նույն տեղում): Ըստ այդմ՝ տարբերակում է արվում ընդհանրացված և սահմանափակ գործականության միջև:

Ընդհանրացված գործականությունը ձգտում է ընդլայնելու գործելու կարողությունը՝ փոփոխելով գործելապայմանները, ինչը հնարավոր է միայն համատեղ, համագործակցային միավորումով («հայտարարելով սեփական կենսապայմանները համատեղ տնօրինելու ընդհանուր շահը ընդդեմ իշխող մասնակի շահերի», Holzkamp, 1983, էջ 373): Սա կարելի է նաև հասկանալ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի կարգախոսին հղում անելով, որում յուրաքանչյուր անհատի ազատ զարգացումը պայման է բոլորի ազատ զարգացման: Այդուհանդերձ, սուբյեկտի գործողության այս հեռանկարը կապված է եղած գործականությունը վտանգելու ռիսկի հետ, քանի որ այստեղ տիրապետող հարաբերությունների դեմ ապստամբություն է պետք, որտեղ նաև կա ձախողելու հավանականություն (Holzkamp, 1983):

Ի տարբերություն սրա՝ սահմանափակ գործականությունը ենթադրում է ապահովագրել գործելու կարողությունը՝ ընդունելով առկա իշխանության հարաբերությունները և գործելով դրանց ներքո սեփական շահի համաձայն: Այս հեռանկարի համար առանցքային է «պահանջմունքների

անհատական-անմիջական բավարարումը» (Holzkamp, 1983, էջ 2), որում «տարբեր մասնավոր շահերի հակասությունը» հանգեցնում է նրան, որ սուբյեկտը առաջ է տանում իր շահերը մյուսների հաշվին (Holzkamp, 1983, p. 374): Փորձելով սեփական գործականությունը պահպանել գործող իշխանության հարաբերություններում որոշակիորեն դասավորվելու միջոցով՝ սուբյեկտի հրաժարումը ընդհանուր պայմանների հանդեպ տնօրինումից միաժամանակ նպաստում է հակառակ արդյունքին, այն է՝ սուբյեկտը ակտիվորեն մասնակցում է սեփական ճնշման գործում և երկարաժամկետ հեռանկարում նվազեցնում է իր իսկ գործելու կարողության հենքը (Holzkamp, 1983): Այս հակասությունը, այն է՝ որ սեփական գործականությունը պահպանելու համար սահմանափակող մոտեցում ընդունելով և ընդհանուր պայմանների տնօրինումից հրաժարվելով՝ սուբյեկտը երկարաժամկետ հեռանկարում այն վտանգում է՝ թողնվելով գործող իշխանության հարաբերությունների բարեհաճությանը, նաև անվանվում է ինքնաթշնամանք (*Selbstfeindschaft*):

Այսպիսով՝ սուբյեկտն ունի իր կենսապայմանները տնօրինելու կրկնակի հնարավորություն. կա՛մ սահմանափակումով՝ ճանաչելով գործող իշխանության հարաբերությունները հանուն անհատական պահանջմունքների անմիջական բավարարման, կա՛մ ընդհանրացմամբ, որում կենսապայմանների տնօրինումն ընդլայնվում է ջանքերը այլ սուբյեկտների հետ միավորելու միջոցով: Արտաքին հայացքով՝ գործականության մեկ կամ մյուս հնարավորության նպատակահարմարության մասին չենք կարող դատել անհատի փոխարեն.

դրանք ավելի շուտ ծառայում են որպես կողմնորոշիչ եզրույթներ այն դիսկուրսում, որի ներքո դիտարկում ենք սուբյեկտին:

Քննադատական հոգեբանական մոտեցումները հոգեկան խանգարումներին

Համաձայն Հոլցկամպի՝ գործականությունը վճռորոշ նշանակություն ունի մեր բարօրության համար, «որովհետև գործականությունն ամենաընդհանուր շրջանակային հատկանիշն է մարդկային և մարդավայել գոյության, իսկ ան-գործականությունը ամենաընդհանուր հատկանիշն է հանգամանքների ողորմածությանը, վախին, ստրկությանը և նվաստացմանը թողնված լինելու մարդկային թշվառության» (Holzkamp, 1983, էջ 243): Այստեղ էական է սահմանափակ գործականությանը ներհատուկ առանցքային հակասության ավելի հանգամանակի դիտարկումը, քանի որ այն «ապահովում է հասկացութային նախադրյալներ՝ լիարժեք տեսական-գործնական-էմպիրիկ ըմբռնման համար այն ամենի, ինչն այստեղ ու այսօր քննարկվում է որպես *հոգեբանական դժվարություններ, խանգարումներ, ներոգներ և այլն*» (Holzkamp, 1983, էջ 376):

Համապատասխանաբար, այս առանցքային հակասությունը կամ ինքնաթշնամանքը հոգեբանական խնդիրների զարգացման հիմնապատճառն է: Ըստ Հոլցկամպի (1983)՝ իրականության բոլոր այն կողմերը, որոնցում սուբյեկտը ներգրավված է սեփական ճնշման գործընթացում և հրաժարվում է մյուսների հետ համագործակցելուց՝ իր գործականությունը ընդլայնելու համար (այսինքն՝ գործում է

սահմանափակ գործականությամբ), պետք է արտամղվեն և մերժվեն:

Այստեղ հարկ է հիշատակել նաև Ուտե Օստերկամպի (1976) կազմած փաստաթղթերը, որոնցից բխում են Հոլցկամպի նկատառումները: Ըստ Օստերկամպի՝ կոնֆլիկտները ծագում են «գործականության սպառնալից բացակայության» (Osterkamp, 1976, էջ 280) միջոցով և վերագրելի են ոչ թե Իդի պահանջներին, ինչպես Ֆրոյդի մոտեցման մեջ, այլ հետևյալին՝

երբ (ա) չկա ակնկալիք, որ գործողությունը կհաջողի կախվածության հարաբերությունները վերացնելու փորձի ընթացքում՝ ընդլայնելով գիտակցված ազդեցությունը ընդհանուր և դրանով իսկ՝ նաև անհատական կյանքի պայմանների վրա, կամ (բ) որպես նույն գործընթացի հակառակ կողմ՝ երբ կանխատեսվում են այն հետևանքները, որ սուբյեկտիվորեն հնարավոր և անհրաժեշտ ճանաչված գործողությունները չկատարելը կունենա թե՛ իր իսկ գոյության և թե՛ իր վարքի ազդեցությունը կրող մյուսների գոյության վրա:

Այս դիտարկումը համապատասխանում է սահմանափակ գործականությանը բնորոշ հակասությանը: Օստերկամպը նաև առաջ է քաշում հուզականության դերը, որը ներհատուկ է վճռական պատրաստականությանը՝ գործելու սեփական կյանքի պայմաններն ընդլայնելու համար, և որը սովորաբար ճնշվում է պաշտպանական մեխանիզմների միջոցով (հմմտ.՝ Ֆրոյդ): Ախտանիշների ի հայտ գալը փորձ է՝ ճնշելու «սպառնալից գիտակցումները [...], տագնապը՝ իբրև վարքում

ուղղության բացակայության և ուրիշների ողորմածությանը թողնվածի անօգնականության հուզական արտացոլում» (Osterkamp, 1976, էջ 341), որպեսզի դրանք դառնան ավելի կառավարելի խառնիխուռն ընթացիկ կենսապայմաններում:

Հոլցկամպի և Օստերկամպի այն տեսակետը, որ սահմանափակ գործականությունը և ինքնաթշնամանքը առանցքային դեր ունեն հոգեբանական խնդիրների և այդպիսով՝ «սուբյեկտիվ կյանքի ցանկացած խնդրի» զարգացման մեջ (Holzkamp, 1983, էջ 376), անշուշտ պետք է քննականորեն դիտարկվի: Մարկարդը (Markard, 2009) պնդում է, որ միանգամայն հնարավոր է, որ մարդիկ կենսապայմանների հետ հաշտության եզրեր գտնեն հոգեբանորեն առողջ կերպով կամ, մյուս կողմից, հուսահատության գիրկն ընկնեն ավելի լավ հասարակության համար համընդհանուր պայքար մղելիս, և որ հետևաբար վիճարկելի է Հոլցկամպի նկատառումների էմպիրիկ ամրությունը (Markard, 2009, էջ 193): Որպես օրինակ՝ այստեղ մեջբերվում է մեկը, ով դեկավարների դեմ իր պայքարի հետևանքով զրկվում է իր մասնագիտական գործունեությունից և ի վերջո ընկճվում: Զարգացնելով այս գիծը՝ Կյուպերն (Küpper, 2016) ընդգծում է, որ ուղիղ և կառուցվածքային (համակարգային) բռնությունը նույնպես կարող է լինել հոգեբանական խնդիրների պատճառը այն պարագայում, երբ իշխողների հետ որևէ պայմանավորվածություն քննարկելու հնարավորությունը բացակայում է, իսկ այդ պայմանների ընդունումը նրանց պարտադրվում է ուժով: Կյուպերն (Küpper 2016) այնուհետև բացատրում է Հոլցկամպ-Օստերկամպի բազային հասկացության իր ընդլայնված ըմբռնումը. հոգեկան տառապանքը

սերտորեն կապված է պահանջմունքների սուբյեկտիվ բավարարման սահմանափակման կամ խոչընդոտման հետ: Կենսապայմանները տնօրինելու ընդլայնմանն ուղղված հանգուցալուծումը բռնի իրավիճակներում կա՛մ կձախողվի, անմիջապես անհնարին կդարձվի, կա՛մ չափազանց մեծ ռիսկ կպարունակի, կթիրախավորվի կամ կառուցվածքայնորեն կկանխվի: Եթե չկան գործականության այս սահմանափակումները հաղթահարելու հնարավորություններ, եթե հասանելի տարբերակները բերված են նվազագույնի, և եթե կառուցվածքային բռնության ենթարկվողները հետևողականորեն զրկված են հեռու տանող հասարակական մասնակցության հնարավորություններից, ապա անհրաժեշտ է լինում փնտրել բռնության, սահմանափակման և դուրս թողնվելու փորձառությունների հետ գործ ունենալու այլ եղանակներ: Կյուպերն (Küpper, 2016) այս երևույթը նկարագրում է՝ օգտագործելով *հոգեկանացում (psychization)* հասկացությունը, որի դեպքում սուբյեկտը խնդիրները հաղթահարելու համար գործելու հնարավորություններ է ստեղծում իր սոցիալական «նեղ շրջանակում» կամ սեփական ներաշխարհում, քանի որ կյանքի հնարավորությունները նեղացված են իրադրային կամ կառուցվածքային սահմանափակումների բերումով: Սա երբեմն կարող է հանգեցնել «հեռուն գնացող հոգեկան աղճատումների, շեղումների, գործելու հուսահատ իմպուլսների և սահմանային հուզական վիճակների» (Küpper, 2016, էջ 58): Որպես օրինակ Կյուպերը բերում է, ի թիվս այլ բաների, կոմպուլսիվ գործողությունները, որոնք կարելի է հասկանալ իբրև «ինքնաշխատ փոխարինող գործողություններ չափազանց ճնշող և սպառնալից

իրավիճակներում՝ սայթաքող կենսապայմանների և դրանց հետ կապված տագնապների հանդեպ անուղղակիորեն վերահսկողություն գտնելու նպատակով» (Küpper, 2016, էջ 59): Այստեղ նպատակն է սուբյեկտիվ փորձառության մեջ ստեղծել ապահովություն, որն իրականության մեջ չկա:

Գործականությունը տրավմավորման դեպքում

Այժմ ես հանգամանորեն կանդրադառնամ նրան, թե որքանով են գործականության մասին վերը բերված նկատառումները կիրառելի տրավմատիկ փորձառությունների նկատմամբ: Տրավմատիկ փորձառությունը բռնի իրադրություն է, որում պահանջվում են դրան ենթարկված սուբյեկտի արագ արձագանքն ու գործողությունը, մինչդեռ միաժամանակ գործելու տիրույթը խիստ կրճատված ու սահմանափակված է (Pedersen, 2019): Այն, որ անվտանգության, ֆիզիկական և հոգեբանական ամբողջականության պահանջմունքն այստեղ ծայրաստիճան սահմանափակված և կրճատված է, անհերքելի է, և սուբյեկտն ի գործու չէ իրականության մեջ բավարարելու այս պահանջմունքը՝ իրավիճակն իբրև սուր սպառնալիք փորձառելու բերումով: Որքանո՞վ կարելի է ՀՏՄԽ առանցքային ախտանիշերը՝ կաշունությունները, խուսափողական վարքը և գերգրգռվածությունը, Կյուպերի (Küpper, 2016) հոգեկանացման հասկացության միջոցով ըմբռնել իբրև փոխարինող գործողություններ և խուսափման մեխանիզմներ, որոնք ուղղված են մերձակա սոցիալական շրջանակում կամ հոգեկան ներաշխարհում եղած խնդիրների հաղթահարմանը:

Այստեղ կցանկանայի կրկին ընդգծել, որ ինչ-որ բան սուբյեկտագիտության մոտեցմամբ հասկանալու համար պետք է ստանձնել առաջին դեմքի տեսանկյունը, և հաջորդիվ բացատրությունները պետք է կոնկրետ «ախտանիշերը» հասկանալի դարձնելու միայն հնարավոր մեկնակետեր լինեն: Աչքի է զարնում, որ վերը բերված ախտանիշերը թվացյալ աններդաշնակության, անգամ հակադրության մեջ են: Սա կարող է պայմանավորված լինել այն համգամանքով, որ տրավմատիկ փորձառությունը հանգեցնում է ճեղքվածքների՝ այնպես, որ ազդված սուբյեկտը փորձում է բավարարել միանգամից մի քանի հակադիր պահանջմունքներ: Մի կողմից՝ դա անվտանգության պահանջմունքն է, որին փորձում է համապատասխանել խուսափողական վարքը: Խուսափելով վայրերից, մարդկանցից, հոտերից, տրավմատիկ իրադրությանն առնչվող այլ կողմերից՝ մարդիկ միտված են փնտրելու ենթադրաբար ավելի անվտանգ իրավիճակներ: Շարունակ վերապրումը կամ գերգրգռվածությունը, մյուս կողմից, կարող է փորձ լինել՝ մտովի հետ գնալու դեպի անցյալի իրավիճակում ակտիվորեն ինքն իրեն պաշտպանած լինելու պահանջմունքը կամ գալիք իրավիճակներում այլ կերպ հակազդելուն և այլ կերպ նախապատրաստված լինելուն: Տրավմա տարած անձի մեջ այսպիսի շարունակ մտովի վերախաղարկումը, որը դրսից դիտարկողը կարող է կապել ամոթի կամ մեղքի զգացումների հետ, Փեդերսենը (Pedersen, 2019) մեկնաբանում է որպես անձի՝ փորձառությունը հաղթահարելու և ակտիվորեն դրանից դաս քաղելու սեփական ջանքեր:

Կարծում եմ, որ հոգեբանական խնդիրների ձևավորման մեջ կենտրոնական տարրն այն է, որ սեփական գործականությունը ընդլայնելու

(ընդհանրացված գործականության իմաստով) հնարավորությունը ընկալվում է սահմանափակված: Այստեղ այլոց հետ միավորումը կբերեր այն պայմանների փոփոխությանը, որոնք հենց թույլ են տվել նման իրավիճակի առաջացումը և սուբյեկտի անվտանգության խիստ նվազեցումը: Հոլցկամպի այն դրույթը, որ հոգեվիճակը սերտորեն կապված է կյանքի օբյեկտիվ պայմանները տնօրինելու հետ, կրկին կիրառելի է այստեղ: Սուբյեկտը, որը ապրել է տրավմատիկ իրավիճակը, տառապում է ոչ միայն եղած հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այլև այն պայմաններից, որոնք նախ և առաջ հնարավոր են դարձրել այդպիսի գործողությունը կամ հանգամանքը, ինչպես նաև այն հեռանկարից, որ դա կարող է նորից պատահել: Այլոց ողորմածությանը և վախին մատնված լինելու փորձառությունը բավարարող լուծում չի ստանում նրանից, որ սուբյեկտն ի վերջո հայտնվում է ապահով իրավիճակում: Սուբյեկտը պետք է լավի, և նրա փորձառածը պիտի ճանաչվի, և ինքն էլ պիտի ազդեցություն ունենա վերահսկողության ծայրաստիճան կորստի իրավիճակում նորից չհայտնվելու վրա: Հաջորդ հատվածում կբացատրեն, թե սա ինչ տարբերություններ կարող է ունենալ *մարդածին* և *բնական աղետների* պարագաներում:

Գործականությունը մարդածին և բնական աղետների ժամանակ

2021 թվականի հուլիսին անձրևի հորդառատ տեղումները հանգեցրին Գերմանիայում Ահր (գերմ.՝ Ahr) գետի աղետալի վարարմանը: Ահր գետի, ինչպես նաև այլ ավելի փոքր գետերի ջրի մակարդակի ծայրահեղ

բարձրացումը հանգեցրեց մեծածավալ ջրհեղեղի: Իրադարձությունը նշանակալի մեղիա արձագանք ստացավ: Հերմանը նշում է (Herman, 2003), որ բնական աղետներից և ֆորսմաժորային դեպքերից տուժածների նկատմամբ համակրանք զգալն ավելի հեշտ է: Մեծաքանակ նվիրատվություններ հավաքվեցին, Գերմանիայի բոլոր կողմերից կամավորականներ մեկնեցին դեպի այդ տարածքները՝ աջակցելու մաքրման ջանքերին: Ըստ տեղի բնակիչների՝ կար ահռելի համերաշխություն և աջակցություն, որոնց ներքո սոցիալական տարբերությունները երկրորդական էին թվում, քանի որ յուրաքանչյուր օգնող ձեռք պետք էր: Կանիաստին և Նորիսը (Kaniasty և Norris, 2004) այս փուլը բնութագրում են որպես «հերոսական հետձգնաժամային բարեգործություն», որը բերում է մեծ համախմբման և սոցիալական աջակցության: Սա կարելի է հասկանալ որպես ապաքինման փուլ, որը հաջորդում է ջրհեղեղի ժամանակ փորձառած սուր սպառնալիքին և անգորացմանը: Հավաքական աշխատանքների և համերաշխության այս փուլն ունի Հոլցկամպի նկարագրած՝ ընդհանրացված գործականության տարրեր: Այստեղ ուշադրության կենտրոնում ոչ թե անհատական պահանջմունքներն են, այլ այն, որ բոլոր մասնակիցների միավորվելը բերում է յուրաքանչյուրի սուբյեկտիվ բարեկեցության լավացմանը: Հետևելով Հոլցկամպի՝ մարդկանց սոցիալական բնույթի ըմբռնմանը (Holzkamp, 1987)՝ կարող ենք ասել, որ տուժած մարդիկ ընկալում են, որ իրենց փորձառությունները տեղ ունեն հավաքականության մեջ, որ համայնքը հասնում և պահում է նրանց, և որ նրանք կարող են վերականգնվել անօգնականության, անիմաստության, մեղքի, ամոթի և

մեկուսացման վիճակներից: Ինչևէ, սա սովորաբար կարճատև փուլ է, հետևաբար շուտով սոցիալական աջակցության մակարդակը նորից ընկնում է (Kaniasty & Norris, 2004), ինչը կարելի է մասամբ բացատրել աջակցության համակարգերի գերբեռնմամբ և ցանցերի հազեցմամբ: Սոցիալական տարբերությունները, մարզինալացումը և արտոնությունը կրկին կարող են ավելի արտահայտված դառնալ, և տուժյալները ևս խոսում են այսպիսի հետընթացի մասին, երբ պետության ֆինանսական աջակցությունը դեռ չի վճարվել, և նրանք իրենց լքված են զգում:

Ի տարբերություն սրա՝ *մարդածին աղետներին* (օրինակ՝ բռնաբարությանը) մարդկանց հակազդումները կարող են միանգամայն տարբեր լինել: Սա պարզ է դառնում, երբ դիտարկում ենք 2021 թվականի Բազելի վերաքննիչ դատարանի կայացրած մի դատավճիռ, որը արդեն դատվածություն ունեցող բռնաբարողի սահմանված պատիժը կրճատեց տուժյալ կնոջ «հանցակցության» հիմքով, քանի որ վերջինս սեփական համաձայնությամբ սեռական հարաբերություն էր ունեցել մեկ այլ տղամարդու հետ մինչ այդ հանցանքը (դատավորի հայտարարությունը՝ «Պետք է եզրակացնել, որ նա կրակի հետ էր խաղում»): Այստեղ հստակ է դառնում, թե ինչպես է տուժած կնոջ վրա ազդում ոչ միայն հանցագործի կողմից հոգեբանական և ֆիզիկական բռնությունը, այլև հայրիշխանական բռնությունը, սեքսիստական նախապաշարմունքները և բռնաբարության շուրջ առասպելները, որոնք նրա փորձառությունը հերքում են և անգամ մեղադրում նրան բռնության արարքի համար: Այս կետում հարկ է նշել Փեդերսենի և Ստորմհոյի (Pedersen և Stormhøj, 2019)՝ *անզորացման պարույրի* հասկացությունը: Սեռական բռնության զոհերի հետ իրենց

ուսումնասիրության մեջ նրանք նկարագրում են հետագա դժվարությունները, որոնք առաջանում են բռնության փորձառության հետևանքով: Օրինակ՝ կանայք պատմում են հաջորդիվ ֆինանսական կորուստների և կախվածությունների, շարժման ազատության նվազման, մեկուսացման, իրենց հետ եղածի ինստիտուցիոնալ չճանաչման, դրսից այս ամենի հերքման հետևանքով առաջացող մեղքի ու ամոթի զգացումների («Ի՞նչ էր հագիդ»՝ «Դա քո մեղքը չէ»-ի փոխարեն) մասին: Այս կոնկրետ անգորացնող փորձառությունները փոխհյուսվում են և այդպիսով անգորացման փորձառությունների պարույր կազմում, որոնք առանցքային դեր են խաղում տրավմատիկ գործընթացում:

Փախստականների իրավիճակը դիտարկելիս, որոնք որոշ դեպքերում ենթարկվել են սեռականացված բռնության՝ պատերազմի կամ տեղահանության ընթացքում, պարզ է դառնում, թե ինչպես են կեցության անկայուն կարգավիճակը, մարզինալացումը և ռասիզմի ենթարկվելը է՛լ ավելի նպաստում տուժածների տառապանքին: Թրաֆիքինգի ենթարկված անձինք պարզապես չեն բախվում սեռականացված բռնության գործողություններին հաջորդած անմիջական հոգեբանական և ֆիզիկական հետևանքներին, այլ նաև մեծապես տառապում են եղածի սոցիալական հետևանքներից (Nesterko և Glaesmer, 2020):

Մագիստրոսական թեզիս շրջանակում անցկացրած իմ հարցազրույցներից մեկում աջակցություն տրամադրող մի մասնագետ նշում էր, որ իր փորձը հաշվի առնելով՝ տուժյալներից շատերի համար հենց բռնաբարության գործողությունը չէր, որ նշանակալի էր, այլ դրանից շատ ավելի՝ համայնքից վտարված լինելու հետագա զգացումը: Մա կարելի է

հասկանալ նաև Շտաուֆերի «էթիկական միայնության» (Stauffer, 2015) հղացքի շրջանակում, որը նկարագրում է մարդկության կողմից լքված լինելու ապրումը, որի վրա բարդվում է գործած անիրավության դաժանության չճանաչումը: Բացակայում են տուժած անձանց ընդունումն ու աջակցությունը, նրանց փորձառածը մասամբ հերքվում է, և նրանք ենթարկվում են ինստիտուցիոնալ և հանրային խարանավորման, ինչը բերում է նրանց շարունակական մեկուսացման (Nesterko և Glaesmer, 2020): Համայնքից դուրս մղվելը կարող է հավելյալ ցավ պատճառել սուբյեկտին նաև այն պատճառով, որ նվազեցնում է պայմանները տնօրինելու ընկալվող հնարավորությունը և այդպիսով բացառում ընդհանրացված գործականության հնարավորությունը: Այստեղ հասարակական արտադրությանը մասնակցելուց դուրս մղումը կարող է տեղի ունենալ ինչպես ուղղակիորեն՝ հասարակական վտարմամբ, ընտանիքի/համայնքի կողմից վռնդվելով, աջակցության մերժմամբ, այնպես էլ ավելի անուղղակի ձևերով՝ տուժածներին լռեցնելով կամ նրանց փորձառությունը հերքելով ու տաքուացնելով: Այս ամենը պետք է դիտարկվի փոխհատոդական (ինտերսեկցիոնալ) տեսանկյունից, և հետևապես մարզինալացումն ըստ սեռի, տարիքի, կրթության, դասակարգի, էթնիկության, հաշմանդամության կարող է ավելի վատթարացնել հետևանքները: (...)

Քննադատական հոգեբանության դիրքից, պետք է ասել, «մարդածին» և «բնական» աղետների միջև տարբերակումը ևս պետք է քննադատորեն դիտարկվի: Մի կողմից՝ այն չի հետևում սուբյեկտի տեսանկյան դիրքից նայելու սկզբունքին, այլ ավելի շուտ բխեցվում է արտաքինից՝ ըստ տրավմավորող իրավիճակի ենթադրական պատճառականության: Մյուս

կողմից՝ այս տեսանկյունը հակադրում է մարդու սոցիալականությունն ու բնությունը, ինչը վճռականորեն մերժվում է Հոլցկամպի և քննադատական հոգեբանական մոտեցման կողմից: Ահրի ջրհեղեղի աղետը, ինչպես և նմանօրինակ շատ այլ աղետներ, պետք է դիտվեն իբրև ներկայիս կապիտալիստական-արդյունաբերական արտադրության ձևի և դրա հրահրած կլիմայական փոփոխությունների հետևանքներ (World Weather Attribution, 2021), որոնց ֆոնին աղետների «մարդածին» և «բնական» տարբերակումը հիմնավորապես վիճարկվում է: Սակայն նույնիսկ եթե այս տարանջատումը հիմնագուրկ է, այն արդյունավետ է երկու տիպի աղետներին սոցիալական միջավայրի տարբերվող արձագանքները հասկանալու համար: Այն նաև առաջ է քաշում այն հարցը, թե արդյոք սահմանափակ գործականությանը ներհատուկ հակասությունը կրկին իր դրսևորումը չի ստանում նրանում, որ անհատը հաճախ արտամղում և հերքում է իր մասնակցությունը կլիմայական փոփոխության մեջ՝ սատարելով և պահպանելով դրան նպաստող պայմանները:

Եզրակացություն

Բնական կամ մարդածին աղետների կոնկրետ փորձառություն ունեցած սուբյեկտների տրավմատիկ գործընթացները իրար հետ համեմատելի չեն, և ոչ էլ դրանք հնարավոր է հասկանալ առանց սուբյեկտի դիտանկյունը ավելացնելու: Այս հոդվածի և մարդածին ու բնական աղետների միջև տարանջատման վերլուծության նպատակը ցույց տալն է, որ ընդհանրացված գործականությունը հաշվի առնելը, մասնավորապես՝

սուբյեկտներին հասարակական արտադրությանը մասնակցելու ու նրանց՝ այլոց հետ համատեղ սեփական գործականությունն ընդլայնելու հնարավորությունից զրկելը առանցքային պահ է տրավմատիկ փորձառության մեջ: Հոլցկամպի և Օստերկամպի՝ հոգեբանական դժվարությունների զարգացման մեջ սահմանափակ գործականության դերի վրա կենտրոնացումը տարածվում է նաև ընդհանրացված գործականության հարցերի վրա: Պարզ է դառնում, որ տրավմատիկ գործընթացները պայմանավորված չեն սոսկ հրահրող իրավիճակով և անհատով, այլ ամենից առաջ խարսխված են հասարակության մեջ և ձևավորվում են հասարակությամբ: Սա նաև ենթադրում է հասարակական պատասխանատվություն տուժյալների հանդեպ, որը պետք է ուղղված լինի վերջիններիս գործականության վերականգնմանը: Ինչպե՞ս կընթանար Բազելի դատական գործը մի այնպիսի հասարակության մեջ, որտեղ հայրիշխանական կառուցվածքները հետ մղված կլինեին: Որքա՞ն է հավանականությունը, որ ինքնին այդ հանցանքն առհասարակ տեղի կունենար: Ինչպիսի՞ն կլինեին Ահրի բնակիչներին աջակցությունը, եթե աջակցողների դրդապատճառները ներառեին նաև մեղսակցության զգացում ինքնին ջրհեղեղի առաջացման մեջ:

Այս հոդվածը չի հավակնում լուսաբանելու տրավմատիզմի բոլոր կողմերն իրենց ամբողջության մեջ և բացատրելու դրանք Քննադատական Հոգեբանության համատեքստում: Ուստի որոշ ասպեկտներ բաց են մնում և կարիք ունեն հետագայում քննարկվելու: Վիճարկելի է, օրինակ, թե ինչպես կարելի է այս քննարկման մեջ ներառել հանցանքին զոհի վերագրած

իմաստի կամ սիմվոլիզացման ասպեկտը: Պարզ չէ նաև, թե ինչպես հետաձգված տրավմատիկ հակազդումը՝ տրավմատիկ փորձառության (սովորաբար՝ մանկության ժամանակ) և հոգեբանական դժվարությունների ի հայտ գալու միջև ընկած ծածկընթաց (լատենտ) շրջանով, կարող է տեղավորվել այս հղացական մշակման մեջ: Այս հոդվածը նաև նպատակ ունի տրամադրելու մեկնակետ՝ քննելու համար, թե ինչպես «ընդհանրացված գործականություն» հասկացությունը կարող է օգնել ավելի լավ հասկանալու դիսթրեսի փորձառությունները՝ տրավմայի/հոգեվնասվածքի օրինակով: Այն, թե ինչպես սա կարող է կիրառվել այլ հոգեբանական խնդիրների կամ «խանգարումների» նկատմամբ, լրացուցիչ մտորում է պահանջում: Տրավմատիկ փորձության գոհերի տառապանքը հասկանալու գործում ընդհանրացված գործականության հարցն ավելացնելը հասարակությանը գոհերի հետ գործ ունենալու պահանջներ է առաջ քաշում: Սակայն կարո՞ղ է արդյոք այսպիսի ավելացումը հետևանքներ ունենալ նաև հոգեթերապևտիկ պրակտիկայի համար: Մի բան պարզ է թվում. տուժյալ անձանց արդյունավետ աջակցությունը չի կարող հիմնվել սոսկ անհատական հաղթահարման ռազմավարությունները ուժեղացնելու մոտեցման վրա՝ գերիշխող պայմաններին հարմարվելու նպատակով, և չպետք է հանգեցվի բացառապես այն ենթադրյալ ոլորտներին, որոնց վրա անհատը կարող է ազդեցություն ունենալ: Քանի որ սա ձևախեղում է սուբյեկտի հնարավորությունը՝ հենց պայմանների վրա ազդունակ լինելու: Հոգեթերապևտները պիտի քաղաքական դիրքորոշում ունենան, որը հաշվի

Է առնում անհատների տառապանքի սոցիալական խարսխվածությունը և դրանով իսկ ճանաչում է այն, որ տուժածների արդյունավետ աջակցությունը ձեռք ձեռքի է գնում սոցիալական փոփոխության հետ: Սա պետք է լինի քաղաքական կեցվածք, որտեղ համերաշխությունը չի կանգնում-մնում զուտ հոչակումներում, այլ ի վերջո դառնում է հավաքական պայքար հանուն գործականությունը սահմանափակող բռնի կառույցների կազմալուծման: Ի հավելումն այս առավել տեսական նկատառումների՝ մենք կարիք ունենք հետագա գործնական մոտեցումների, որոնք ցույց կտային, թե կոնկրետ ինչպիսին կարող է լինել քննադատական-հոգեբանական հոգեթերապիան: Ինչնիցե, քննադատական-հոգեբանական դիտանկյունը նաև հստակ է դարձնում, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող մարդկանց տառապանքը մեղմելու և նրանց գործականության ընդլայնմանը նպաստելու պատասխանատվությունը միայն հոգեբանների վրա չի ընկնում, այն պետք է հասցեագրվի հավաքական ջանքերով:

Աղբյուրներ

- Astill Wright, L., Horstmann, L., Holmes, E. A., & Bisson, J. I. (2021). Consolidation/reconsolidation therapies for the prevention and treatment of PTSD and re-experiencing: A systematic review and meta-analysis. *Translational psychiatry*, 11(1), 453. <https://doi.org/10.1038/s41398-021-01570-w>
- Becker, D. (2014). *Die Erfindung des Traumas: Verflochtene Geschichten*. Psychosozial-Verlag.
- Brensell, A. (2014). Traumaverständnis. In A. Brensell, & K. Weber (Eds.), *Störungen* (1st ed., pp. 123–150). Argument-Verlag.
- Davies, J. (2021). *Sedated: How Modern Capitalism Created Our Mental Health Crisis*. Atlantic Books.
- Flatten, G., Gast, U., Hofmann, A., Knaevelsrud, C., Lampe, A., Liebermann, P., Maercker, A., Reddemann, L., & Wöller, W. (2011). S3-Leitlinie: Posttraumatische Belastungsstörung: ICD-10: F43.1. *Trauma & Gewalt* 5(3), 202– 210.
- Herman, J. L. (2003). *Die Narben der Gewalt: Traumatische Erfahrungen verstehen und überwinden*. Junfermann.
- Holzkamp, K. (1983). *Grundlegung der Psychologie*. Campus.
- Holzkamp, K. (1987). Grundkonzepte der Kritischen Psychologie. In AG Gewerkschaftliche Schulung und Lehrerfortbildung (Ed.), *Wi(e)der die Anpassung. Texte der Kritischen Psychologie zu Schule und Erziehung* (pp. 13– 19). Verlag-Schulze-Soltau.
- Holzkamp, K. (1988). Die Entwicklung der Kritischen Psychologie zur Subjektwissenschaft. In G. Rexilius (Ed.), *Psychologie als Gesellschaftswissenschaft* (pp. 298–317). Westdeutscher Verlag. https://doi.org/10.1007/978-3-322-97001-5_15
- Kaniasty, K., & Norris, F. H. (2004). Social support in the aftermath of disasters, catastrophes, and acts of terrorism: altruistic, overwhelmed, uncertain, antagonistic, and patriotic communities. In R. J. Ursano, A. E. Norwood, & C. S. Fullerton (Eds.), *Bioterrorism: Psychological and public health interventions*. Cambridge Univ. Press.
- Keilson, H. (1979). *Sequentielle Traumatisierung bei Kindern: Deskriptiv-klinische und quantifizierend-statistische follow-up Untersuchung zum Schicksal der jüdischen Kriegswaisen in den Niederlanden*. Enke.
- Kessler, R. C., Sonnega, A., Bromet, E., Hughes, M., & Nelson, C. B. (1995). Posttraumatic stress disorder in the National Comorbidity Survey. *Archives of general psychiatry*, 52(12), 1048–1060. <https://doi.org/10.1001/archpsyc.1995.03950240066012>

Küpper, C. (2016). Unter der Fuchtel des Unbewussten? Kritische Psychologie, psychisches Leiden und das Unbewusste. In: M. Hummel, L. Knebel, C. Küpper, & M. Zander (Eds.), *Forum Kritische Psychologie Spezial* (pp. 48–60). Argument.

Markard, M. (2009). *Einführung in die kritische Psychologie*. Argument.

Meretz, S. (2017). Kritische Psychologie. Kategoriale Grundlagen marxistischer Subjektwissenschaft. In: D. Heseler, R. Iltzsche, O. Rojon, J. Rüppel, & T. D. Uhlig (Eds.), *Perspektiven kritischer Psychologie und qualitativer Forschung* (pp. 79–103). Springer. https://doi.org/10.1007/978-3-658-14020-5_5

Mlodoch, K. (2017). *Gewalt, Flucht - Trauma? Grundlagen und Kontroversen der psychologischen Traumaforschung*. Vandenhoeck & Ruprecht. <https://doi.org/10.13109/9783666404795>

Nesterko, Y., & Glaesmer, H. (2020). Sexualisierte Gewalt gegen Männer im Kontext von Krieg und Vertreibung. *Trauma & Gewalt*, 14(3), 182–196. <https://doi.org/10.21706/tg-14-3-182>

Osterkamp, U. (1976). *Grundlagen der psychologischen Motivationsforschung II: Die Besonderheit menschlicher Bedürfnisse: Problematik und Erkenntnisgehalt der Psychoanalyse*. Campus.

Pedersen, B. M. (2019). What is traumatization? A Critical Psychological critique and reformulation. *Annual Review of Critical Psychology*, 16, 544–555. <https://thediscourseunit.files.wordpress.com/2019/12/0544.pdf>

Pedersen, B. M., & Stormhøj, C. (2019). Subjects in gendered constellations of spiralling disempowerment: Situated, personal meanings of rape and other forms of sexualised coercion. *Annual Review of Critical Psychology*, 16, 1108–1141. <https://thediscourseunit.files.wordpress.com/2019/12/1108.pdf>

Stauffer, J. (2015). *Ethical loneliness: The injustice of not being heard*. Columbia University Press.

Steckler, T., & Risbrough, V. (2012). Pharmacological treatment of PTSD - established and new approaches. *Neuropharmacology*, 62(2), 617–627. <https://doi.org/10.1016/j.neuropharm.2011.06.012>

World Health Organization. (2016). *International Statistical Classification of Diseases and Related Health Problems* (10th ed.). <https://icd.who.int/browse10/2016/en#/F43>

World Weather Attribution. (2021, August 23). *Heavy rainfall which led to severe flooding in Western Europe made more likely by climate change* [Press release]. <https://www.worldweatherattribution.org/heavy-rainfall-which-led-to-severe-flooding-in-western-europe-made-more-likely-by-climate-change/>